

Սակայն պիտի հաւատաւ, որ երիտասարդ թիւրք կառավարութիւնը չի թուլանայ այդ փորձութեան առաջ, որ սահմանադրութիւնը չի խախտուի՝ յետադիմականների գործած այս նոր սարսուցուցիչ դասի ծանրութիւնից:

ԱՄԵՆԻՑ ԱԹԱՋ ԴՊՐՈՑՆ Է ՏՕՆՈՒՄ

Պ. Ազն հրապարակ հանեց Գուտաբներգերգեան Դիւտի Մեսրոպիան տառերով ունիցած գործունէութեան 400-ամեակը տօնելու խնդիրը:

Կուլտուրական կեանքի 400 ամեայ յօրելեան Այս տօնին հայ աղջն է հանդէս գալու իր անցեալով, ներկայով և ապագայով; Հայկական մարտիրոսագրութիւնը արեան մէջ յայտնի է ամբողջ աշխարհին; Հայկական մարտիրոսագրութիւնը կուլտուրական ճանապարհին յայտնի չէ նոյնիսկ իրեն հայ ժողովրդին, գոնէ ճշմարտապէս նրա մեծամասնութեանը:

Դժբախտարար հայ ժողովրդի պատմական դրութիւնը շատ անգամ անմասն է թողել հասարակութեան ընդարձակ խաւերին այս կամ այն կուլտուրական տօնին: Յիշեցէք հայ նշանագրերի 1500 ամեայ տօնը մանաւանդ ուստահայերին համար պատմական 1904թ.:

Հայ ժողովուրդը այն ժամանակ զուրկ էր իր ամենամեծ պարծանքի, կուլտուրական ամենաառաջին գոծնի 1500 ամեակը տօնելու մեծ հնարաւորութիւնից: Այն ժամանակ բոլորի սրտին ծանրացած կօշմարը՝ նշանագրերի Դիւտի տօնակատարութիւնը ակամայ սահմանափակում էր գրական շրջաններում:

Վաղը լրանում է հայ տպագրութեան 400 ամեակը:

Նշանագրերի Դիւտ և նրանց տպագիր ձեւակերպումն սերտ շաղկապւած էն մէկ մէկու հետ: Եւ այսօր է, որ հայ ժողովուրդը այդ երկուսը միացրած հարազատ տօնակատարութիւն պիտի կատարի: Եւ սրանում մենք չենք կասկածում:

Տօնելու է և գրականագէտը, և խմբագրողը, և ինտելիգենցիան, և գիւղացին, առանց դասակարգի խտրութեան: Իւրաքանչիւրը իր տեսակէտով, իւրաքանչիւրը իր չափով:

Բայց համարձակում ենք ասել տօնելու է ամենից առաջ հայ դպրոցը միահամուռ ոյժով, միանման ձեռով ու մի աստիճան հոգենորութեամբ:

Տառ, նշանագիր, գիրք ու դպրոց, դրանք ոսկրային կարերով շաղկապւած էն մէկ զմէկու հետ ամուր, հաստատուն և յաւիտեան:

Եւ այսօր մենք հրաւերում ենք տօնելու հայ գրի, հայ Մեսրոպի, հայ

Գուտաբներգերգի հարիւրաւոր տարինեների կեանքը:

Ո՞րտեղ է կուլտուրական մարդեառաջին անգամ դեռ ևս մատաղ տարիքում շիւռում Գուտաբներգերգեան այն յայտնի Դիւտի հետ, որի հայկական տօնակատարութեան հրաւերն է արւում պ. Լէօ-ի կողմից Անշուշտ դըպրացը, հայ դպրոցը և ահա հէնց այսպատճառով լրացող 400 ամեակը մենից առաջ գպրոցական տօն է, գըպրոցական յօրելեան:

Եւ մենք սրանով հրաւեր ենք կարգում դպրոցական աշխարհի կենդրուական մարմիններին այս տօնին պաշտօնական կերպարանք տալ, համագույշին տօն դարձնել և տօնակատարութիւնն սկսել հէնց մատաղ հասակից, մանուկ սրտերում:

Թող հայ մանուկը զգայ իր հոգու ամբողջ խորութեամբ այս տօնի վեհութիւնը: Թող նա ևս բաժանուած ծերի այսօրուայ ոգեորութիւնը: Հայ տարեգրութիւնը նման փայլուն գծերով այսնքան էլ հարուստ չէ և այսօր է, որ հայ դպրոցականը պիտի լսի իր պապերի կուլտուրական գործքերի մասին: Պատերազմների ու ճակատամարտերի ոգեորուած նկարագրութիւններ նա շատ է լսել, տանը, մօր կողքին ծերունի պապից կամ դպրոցական եղրօրից:

Կուլտուրական ճակատամարտերի և քաղաքակրթական շինարարութեան մասին լսելու և լարելու է իր ուշադրութիւնը հայ մատաղ սերունդը կենտրոնական քաղաքում և այստեղ, այն հեռու սարալանջում, որտեղ նահապետական զրոյցն է իշխում և հայրենի երգը ոգեորում:

Մենք չենք կասկածում, որ նման դէպքերում շատ հայ դպրոցներ իրենց չափով մասնակից են լինում համաժողովրդական տօնակատարութիւններին և որ նրանք այս անգամ ես հանգէս են զալու իրենց պարտքի ամբողջական գիտակցութեամբ: Մեր խօսքը պաշտօնական տօնակատարութեան մասին է, անխստիր, պարտաւորապէս, որովհետեւ ամենից առաջ դպրոցական տօնն է այս անխստիր, առանց բացառութեան և միւս կողմից հայ դպրոցի մէջ է ամփոփւած ինքը հայ ժողովուրդը, այսօրւայ կուլտուրական տօնի տէքը:

Սիմ. Տէր-Մինասեան

ՆՈՐ ՏԱՐԵԾՐՁԱՆ—ՆՈՐ ՎԵՐԱԲԱՆ 801Մ

Եկող օգոստոսի մէկից թիֆլիզի թեմի ծխական դպրոցները կունենան թեմական տեսուչ, ու մենք ի սրտ ողջունում ենք այդ ամենակարենու